ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 սեպտեմբերի 2025թ. թիվ 541-Ա

Գ.ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ «ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳՅՈՒՂԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասի, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության և տնօրենի նշանակման կարգը հաստատելու մասին» թիվ 181-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի 2)-րդ ենթակետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 2025 թվականի սեպտեմբերի 16-ի թիվ 534-Ա որոշումը և հաշվի առնելով Գ.Վարդանյանի դիմումը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Գյուլնարա Արտուշի Վարդանյանին 2025 թվականի սեպտեմբերի 17-ից նշանակել «ՀՀ Լոռու մարզի Ձորագյուղի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ մինչև օրենքով սահմանված կարգով մրցույթի արդյունքում նոր տնօրենի ընտրությունը և նրա հետ կնքել ժամկետային աշխատանքային պայմանագիր:

2. Գ.Վարդանյանի վարձատրության չափը սահմանել համաձայն պայմանագրի:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ

2025թ. սեպտեմբերի 17
ք.Վանաձոր